ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 001

ք. Երևան «25» «01» 2016թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ս. Խղդաթյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս ակադեմիայի ռեկտոր Ա. Լոքյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային ծառայություն» շաբաթաթերթում տպագրել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընդհանուր ժամկետ է սահմանվում 2016 թվականի հունվարի 25-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Կատարողին տրամադրել սույն պայմանագրի 7.1 կետում նշված համաձայնության պատճենը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հաշիվ-ֆակտուրայի և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2. Պատվիրատուն հաշիվ-ֆակտուրայի և հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հաշիվ-ֆակտուրայի և հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հաշիվ-ֆակտուրայի և երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության գինը կազմում է 227 800 (երկու հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: 1 քմ սմ-ի արժեքն է 84 (ութսունչորս) ՀՀ դրամ, որից 14-ը (տասնչորս) ՀՀ դրամը ԱԱՀ-ն է: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
Մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամիս, ընդ որում՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության արժեքի 0,05 %-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարումից:

5.8. Սույն պայմանագրի 1.1.; 2.4.1.; 3.1 և 3.2 կետերով նախատեսված իրավունքների ու պարտականությունների փաստացի ապահովումը դրվում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային ծառայություն» շարաթաթերթի գլխավոր խմբագրի վրա:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:
Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները, բաղկացած 2 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու՝	Կ ա տ ա ր ո ղ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
հասցե՝ ք. Գավառ,	«Հանրային ծառայություն» շաբաթաթերթ
Գր. Լուսավորչի 36	հասցե՝ ք. Երևան, Կիևյան 8
Բանկ՝ Գավառի ՏԳԲ	Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ե/հ 900171078299	Հ/Հ 220003320227000
ՀՎՀՀ 08404767	ՀՎՀՀ 00035088
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«25» 01 2016թ կնքված
N 001 գնման պայմանագրի

«Հանրային ծառայություն» շաբաթաթերթի
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- Թերթը պետք է ունենա առնվազն երեք հազար տպաքանակ, պետք է տպագրվի լրագրային թղթի վրա, պետք է լինի A 3 չափսի (ֆորմատ), հայտարարությունները պետք է տպագրվեն 8.7 տառաչափով:
- Թերթը պետք է լույս տեսնի շաբաթը մեկ անգամ. յուրաքանչյուր շորեքշաբթի՝ 4-8 էջով:
- Թերթում բացի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների վերաբերյալ հայտարարություններից, այլ բնույթի հայտարարություններ և գովազդներ չպետք է տպագրվեն:
- Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների վերաբերյալ հայտարարությունները թերթը պարտավոր է ընդունել 7 օրվա ընթացքում, նույնիսկ թերթի լույս ընծայումից մեկ ժամ առաջ:
- Թերթը չպետք է ունենա կուսակցական ուղղվածություն և չպետք է հրապարակի քաղաքական հոդվածներ:
- Թերթը մշտապես պետք է անդրադառնա քաղաքացիական ծառայության համակարգի կայացմանն ու զարգացմանն առնչվող խնդիրներին, ինչպես նաև լուսաբանի այդ համակարգում իրականացվող գործընթացները:

Պատվիրատու՝	Կատարող՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
հասցե՝ ք. Գավառ,	«Հանրային ծառայություն» շաբաթաթերթ
Գր. Լուսավորչի 36	հասցե՝ ք. Երևան, Կիևյան 8
Բանկ՝ Գավառի ՏԳԲ	Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 900171078299	Հ/Հ 220003320227000
ՀՎՀՀ 08404767	ՀՎՀՀ 00035088
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 3
<<25>> հունվարի 2016թ. կնքված
N <<001>> ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
«Հանրային ծառայություն» շաբաթաթերթ	հասցե՝ ք. Գավառ,
հասցե՝ ք. Երևան, Կիևյան 8	Գր. Լուսավորչի 36
Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ	Բանկ՝ Գավառի ՏԳԲ
Հ/Հ 22000332022700 0	h/h 900171078299
ՀՎՀՀ 00035088	ՀՎՀՀ 08404767

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Հայտարարությունների տպագրման ծառայությունների գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2016թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանի, և. Պայմանագրի կողմը՝ ի դեմս ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա. Լոքյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 2 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<25>> հունվարի 2016թ. կնքված
N <<001>> ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N 2

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2016թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20.01.2016թ.-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն